

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ք. Երևան

17.01.2012թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 64-ը:

Նախագահ՝ Ս. Սարգսյան,

Քարտուղար՝ Դ. Հայրապետյան:

### **Օրակարգում.**

1. Ռեկտորի հաշվետվությունը 2010/2011 ուսումնական տարվա Երևանի պետական համալսարանի գործունեության վերաբերյալ:

- 2010/2011 ուսումնական տարվա Երևանի պետական համալսարանի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների ներկայացում և կատարողականի հաստատում:
- 2010-2014թթ. Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրով 2010/2011 ուստարում նախատեսված գործողությունների ներկայացում և կատարողականի հաստատում:
- Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրով 2011թ. նախատեսված գործողությունների ներկայացում և կատարողականի հաստատում:

*Ձեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

2. Երևանի պետական համալսարանի 2011թ. եկամուտների և ծախսերի հաշվետվության գնահատում:

*Ձեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

3. Երևանի պետական համալսարանի 2012թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի հաստատում:

*Ձեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

#### 4. Ընթացիկ հարցեր:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Մինչ Երևանի պետական համալսարանի խորհրդի օրակարգին անցնելը ցանկանում եմ շնորհավորել ձեզ անցած Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ և ցանկանալ, որպեսզի 2012 թվականը լինի ավելի լավ տարի: Ցանկանում եմ նաև վերահաստատել իմ պատրաստակամությունը հանդիպելու Երևանի պետական համալսարանի ուսանողների և երիտասարդ գիտնականների հետ, այն պարզ պատճառով, որ այդ հանդիպումները օգտակար են և արդյունավետ: Ցանկանում եմ հիշեցնել, որ տարիներ առաջ այդ հանդիպումներով սկիզբ են դրվել մի քանի ծրագրեր, որոնք այսօր հաջողությամբ իրականացվում են: Այդպիսի առաջին ծրագիրը եղավ արտասահմանի 20 առաջնակարգ բուհերում սովորող հայ երիտասարդների ուսման վարձերի հոգսը հոգալը, և այսօր «Լույս» հիմնադրամի շահառուներն են 148 երիտասարդներ, ովքեր սովորում են աշխարհի լավագույն բուհերում: Երկրորդ ծրագիրն էր երիտասարդ գիտնականներին, մանկավարժներին, դասախոսներին, նկարիչներին, գրողներին, լրագրողներին բնակարանային ապահովության ծրագրի իրականացումը, որի մի մասն արդեն իրականացվել է և մինչև 2013 թվականի մայիս ծրագրի արդյունքում 1300 երիտասարդներ ապահովված կլինեն մատչելի բնակարաններով: Հաջորդ ծրագիրը երիտասարդ գիտնականների համար մի հիմնադրամի ստեղծումն է, որի պայմանավորվածությունը կա, և ծրագիրը գտնվում է իրականացման փուլում: Հաջորդ ծրագիրը Երևանի պետական համալսարանի լաբորատորիաների վերազինումն էր: Այս ուղղությամբ մենք պարտավորությունները կատարել ենք և սպասում ենք նոր առաջարկությունների: Կարող ենք նաև թվել մի քանի այլ ծրագրեր, սակայն հարցը ծրագրերի քանակը չէ, այլ այն, որ Երևանի պետական համալսարանը չի կարող սահմանափակվել միայն ներբուհական խնդիրներով, և ես ուրախ եմ, որ այդ հանդիպումների ժամանակ բարձրացվում են հարցեր, որոնք կենսական են, կարևոր են կրթության և գիտության համար: Ես պատրաստ եմ հետագա նոր հանդիպումների:

Անցնելով օրակարգին նշեմ, որ Խորհրդի 72 անդամներից ներկա են 64-ը: Քվորումն ապահովված է և մենք կարող ենք սկսել: Օրակարգը ձեզ ծանուցված է: Կա՞ն առաջարկություններ օրակարգի հարցերի վերաբերյալ: Եթե ոչ, առաջարկում եմ քվեարկությամբ հաստատել օրակարգը:

**Կողմ՝ 64, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

1. Ռեկտորի հաշվետվությունը 2010/2011 ուսումնական տարվա Երևանի պետական համալսարանի գործունեության վերաբերյալ:

- 2010/2011 ուսումնական տարվա Երևանի պետական համալսարանի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների ներկայացում և կատարողականի հաստատում:
- 2010-2014թթ. Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրով 2010/2011 ուստարում նախատեսված գործողությունների ներկայացում և կատարողականի հաստատում:
- Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրով 2011թ. նախատեսված գործողությունների ներկայացում և կատարողականի հաստատում:

*Ձեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

**Ս. Սարգսյան (Խորհրդի նախագահ)** – Առաջարկում եմ խոսքը տրամադրել զեկուցողին և այս հարցի ներկայացման համար տրամադրել 25 րոպե ժամանակ:

**Ա. Սիմոնյան** – Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ, Խորհրդի հարգարժան անդամներ,

Բուհական կրթությանը ներկայացվող արդի միջազգային պահանջներին համահունչ՝ հաշվետու ժամանակաշրջանում Երևանի պետական համալսարանում շարունակվել են արդյունավետ աշխատանքները ուսումնական գործընթացի կատարելագործման, համակարգային փոփոխությունների, ուսուցման տեխնոլոգիական հենքի զարգացման և նորացման, գիտահետազոտական գործունեության ընդլայնման և այլ ուղղություններով:

2010/2011 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում տարվել են աշխատանքներ ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման ուղղությամբ, իրականացվել են աշխատանքներ եվրոպական չափորոշիչներին համահունչ որակի ներքին ապահովման և ուսանողների գիտելիքների գնահատման թափանցիկ ու արժանահավատ համակարգերի ներդրման և մի շարք այլ բնագավառներում:

## ***Ուսումնական գործունեություն***

Համալսարանի կրթական գործունեությունն ընթացել է հետևյալ հիմնական ուղղություններով:

### **1. Կրեդիտային համակարգ**

Համալսարանի առկա և հեռակա ուսուցման ձևերում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների ուսումնառությունը կրեդիտային համակարգով կազմակերպելու նպատակով լրամշակվել և հրատարակվել են միասնական ֆակուլտետային «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական փաթեթները և դրանց լազերային սկավառակները, որոնք պարունակում են ուսանողներին անհրաժեշտ տեղեկատվությունն իրենց ուսումնառությունը կրեդիտային համակարգով կազմակերպելու համար: Հաշվետու տարում նաև ասպիրանտուրան ևս անցել է կրեդիտային համակարգով ուսուցման ծրագրի:

### **2. Որակի ապահովում**

Երևանի պետական համալսարանը որդեգրել է որակի ներքին ապահովման նոր քաղաքականություն և ռազմավարություն, հիմնել է որակի ապահովման մասնագիտացված կառույց (բաժին)՝ համալսարանում որակի ներքին ապահովմանն առնչվող գործընթացներն իրականացնելու և վերահսկելու համար: Մշակվել և հրատարակվել են «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշները», «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման», և «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման» կարգերը: Կրթական ծրագրերի ամենամյա մշտադիտարկման և պարբերական վերանայման համար օգտագործվում են ուսանողներից ու ծրագրերի շրջանավարտներից հետադարձ կապի օգնությամբ ստացվող գնահատումները: Երևանի պետական համալսարանի 122 մագիստրոսական ծրագրերի շարքում ներդրվել և հաջողությամբ աշխատում են երկդիպլոմ մագիստրոսական ծրագրեր Ռոստոկի և ԱՊՀ ցանցային համալսարանի հետ:

### **3. Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում**

Առկա ուսուցման համակարգում ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցության օպտիմալացման, մասնագիտությունների ուսումնական, աշխատանքային ուսումնական պլանների և ամբիոնների բեռնվածությունների կազմման աշխատանքներն իրականացվել են ավտոմատացված համակարգով և ունեն լավացման միտում: Առանձնակի ուշադրություն է հատկացվել կուրսատորների աշխատանքի ավելի արդյունավետ կազմակերպմանը և այն կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերի պահանջներին համապատասխանեցմանը: Վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր, որոնցից օգտվել է 2622 ուսանող: Կիրառված զեղչերի գումարը կազմել է մոտավորապես 280 մլն դրամ:

### **4. Ընդունելության նախապատրաստում**

Խորապես գիտակցելով այն հանգամանքը, որ հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է, ինչպես նաև հաշվի առնելով 2011/2012 ուսումնական տարվա առանձնահատկությունները հաշվետու ուստարում սկիզբ են դրվել մի շարք նոր նախաձեռնություններ՝ «դպրոցբուհ» փոխադարձ կապի ամրապնդման, շարունակական կրթության ապահովման, ինչպես նաև ավագ դպրոցի աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ: Երևանի պետական համալսարանի և Երևանի թվով 8, ինչպես նաև Տավուշի 4 ավագ դպրոցների միջև կնքվել են համագործակցության պայմանագրեր:

Դրա հետ մեկտեղ, հաշվետու ժամանակաշրջանում ծավալուն աշխատանք է կատարվել թվով 28 հիմնական և ավագ դպրոցներում ու վարժարաններում, որոնց հետ Երևանի պետական համալսարանն ունի համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր: 100 դպրոցների շուրջ 2000 աշակերտների համար կազմակերպել է «-Բաց դռների օր» և ճանաչողական այցեր Երևանի պետական համալսարան: Կազմակերպվել են օլիմպիադաներ 14 հանրակրթական առարկաների գծով, որին մասնակցել են Երևան քաղաքի և ՀՀ 8 մարզերի 1619 աշակերտ:

## **5. Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում**

Նկատի ունենալով, որ համալսարանի զարգացման հիմնական գրավականը նրա բարձրորակ գիտամանկավարժական կազմն է, հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կողմից մշակվել է դասախոսների որակավորման բարձրացման նոր ծրագիր: Վերջինիս քննարկման հիման վրա ԵՊՀ գիտխորհուրդն ընդունել է երկու հիմնարար փաստաթուղթ՝ «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» և «ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգը»:

Կրթական գործունեության բնագավառում զերծ չենք մնացել նաև բացթողումներից: Դեռևս զգալի աշխատանք կա անելու կրեդիտային համակարգի գործադրումը բարելավելու ուղղությամբ: Էական վերակառուցման փուլում են դեռևս կրթության որակի ապահովման տեղեկատվության ներքին և հանրային տեղեկատվական համակարգերը, որոնք պետք է համապատասխանեցվեն Եվրոպական չափանիշներին: Դեռևս բավարար չափով չի օգտագործվում թե՛ համալսարանի և թե՛ հանրապետության լավագույն մասնագիտական ներուժը լրացուցիչ կրթության ոլորտում, որը, մեր պատկերացմամբ, հարատև ուսումնառության համակարգում համադրող և շտկող գործոնի դեր պիտի կատարի:

### ***Գիտահետազոտական գործունեություն***

2010/2011 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում գիտական աշխատանքներն ընթացել են երեք հիմնական ուղղություններով՝ պետական բազային, թեմատիկ և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Աշխատանքները շարունակվել են նաև 2005 թվականից գործող պետական բազային ֆինանսավորմամբ 23 գիտահետազոտական լաբորատորիաներում և 7 կենտրոններում:

Ընդլայնվել են Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտում կատարվող ուսումնասիրությունների շրջանակները: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերի մրցությային շեմը հաղթահարած ծրագրերի 26 %-ից ավելին բաժին է ընկնում Երևանի պետական համալսարանին: Բոլոր բուհերի մեջ Երևանի

պետական համալսարանի բաժնեմասը կազմում է բազային ֆինանսավորման ծրագրերի 49%-ը, դրամաշնորհային ծրագրերի 65%-ը: Տպագրված աշխատանքների քանակով Երևանի պետական համալսարանը զիջում է միայն Գիտությունների ազգային ակադեմիային և տալիս հանրապետության գիտական աշխատանքի շուրջ մեկ երրորդը:

Այս առումով Երևանի պետական համալսարանի համար իսկապես մեծ նշանակություն ունեցավ ՀՀ Նախագահի հանձնարարությամբ ԵՊՀ ուսումնական և ուսումնագիտական լաբորատորիաների վերազինման ծրագրի (2010-2012 թթ.) մշակումը և հաստատումը, որի կատարումը ենթադրում է համաֆինանսավորում Երևանի պետական համալսարանի և ԵՊՀ հովանավորների կողմից: Ես առաջարկում եմ դիտել սարքավորումներին վերաբերվող 5 բույսերի ֆիլմ, որից հետո կշարունակեմ զեկուցումը:

### **Ֆիլմի դիպրում:**

Կցանականայի ավելացնել, որ սարքավորումները անմիջապես տրամադրվել են ուսանողների կողմից կատարվող աշխատանքների համար: 2010/2011 ուսումնական տարվա ընթացքում պաշտպանվել են 10 դոկտորական և 116 թեկնածուական ատենախոսություններ: Սկսած 2010 թ. հունվարի 1-ից՝ «Բանբերը» լույս է տեսնում մասնագիտական վեց շարքով, որոնցից ամեն մեկն ունի կայուն համարանիշ և 5 մամուլ ծավալ: «Գիտական տեղեկագիր» (բնական գիտություններ) հանդեսը ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ 2009 թվականից տպագրվում է ոչ թե որպես մեկ ընդհանուր պարբերական, այլ ըստ ոլորտների, երեք առանձին շարքով: Ընդ որում, «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» շարքը, համաձայն ԵՊՀ գիտական խորհրդի 2008 թ. մարտի 20-ի որոշման, տպագրվում է անգլերեն, իսկ մյուս երկուսը՝ «Քիմիա, կենսաբանություն» և «Երկրաբանություն, աշխարհագրություն»՝ հայերեն և ռուսերեն:

Չնայած ձեռքբերումներին, այնուամենայնիվ դեռևս բավարար չեն գիտական հետազոտությունների կիրառական արդյունքները, որտեղ մենք շատ անելիքներ ունենք: Քիչ է նաև գյուտերի և լիցենզիաների թիվը:

Հաշվետու ժամանակաշրջանում լույս է տեսել 200 անուն գիրք: Շարունակվել է ԵՊՀ հրատարակչության արդյունավետ համագործակցությունը «Գ. Կյուպենկյան» հիմնարկության Հայկական բաժանմունքի տնօրեն Զավեն Եկավյանի հետ: Հիմնար-

կության հայկական մատենաշարով ԵՊՀ հրատարակչության լույս ընծայած գրքերի թիվն արդեն հասել է 125-ի, որից 10 հատորը լույս է տեսել հաշվետու տարում:

«Գրքարվեստ-2011» հանրապետական չորրորդ մրցանակաբաշխությունում մրցանակի են արժանացել ԵՊՀ հրատարակչության հրատարակած երեք գրքերը՝ 8 հատորներով:

### ***Միջազգային համագործակցություն***

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 187 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել է համագործակցության 12 պայմանագիր բուհերի, հետազոտական կենտրոնների, հիմնադրամների և ընկերությունների հետ:

Ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր մշակութային հարաբերությունների հնդկական խորհրդի հետ՝ Երևանի պետական համալսարանում ժամանակակից հնդկական ուսումնասիրությունների ամբիոն բացելու վերաբերյալ, կնքվել է պայմանագիր ՀՀ և Հնդկաստանի կառավարությունների միջև՝ հայ-հնդկական SCS գերազանցության կենտրոն հիմնելու մասին:

2010/2011 ուսումնական տարում ընդհանուր առմամբ իրականացվել է 518 անձ/գործուղում: Արտերկիր գործուղվել են 323 մասնագետ, 158 ուսանող և ասպիրանտ:

### ***Սոցիալական քաղաքականություն***

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում որոշակի աշխատանքներ են իրականացվել սոցիալական քաղաքականության ուղղությամբ: Երևանի պետական համալսարանի վարչակազմը և արհեստակցական կազմակերպությունն առավել ուշադրություն են դարձրել համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով արհեստակցական կազմակերպությունն իր սեփական միջոցներից, որպես օգնություն, համալսարանի 635 աշխատակիցների, առանձին դեպքերում նաև սոցիալապես խիստ անապահով և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հատկացրել է քսանչորս միլիոն երկու հարյուր իննսուն հազար դրամ:



Համալսարանի աշխատողների և ուսանողների 2400 երեխաների և թոռնիկների համար կազմակերպվել և իրականացվել են ամանորյա միջոցառումներ՝ հատկացնելով ամանորյա ներկայացման տոմսեր և նվերներ: 1719 կին աշխատակիցների համար իրականացվել է Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին նվիրված համահամալսարանական միջոցառում: Ձեռք է բերվել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացվել է թատերական տարբեր ներկայացումների 2856 տոմս:

Հաշվետու տարում կազմակերպվել է աշխատակիցների, նրանց ընտանիքների անդամների և ուսանողների հանգիստը Ծաղկածորի, Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաներում: Իրականացվել է հանգստի մեկնողների համար ուղեգրերի արժեքի մասնակի գեղչման անհատական մոտեցման համակարգ:

### ***Աշխատանք ուսանողների շրջանավարտների և հասարակայնության հետ***

Բազմաբովանդակ է եղել ՈւԽ արտահամալսարանական գործունեությունը: Ուսանողական խորհուրդը ակտիվորեն համագործակցել է նաև ՀՀ կրթության և գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության, Սփյուռքի նախարարությունների, ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի, Երևանի քաղաքապետարանի հետ: ՈԻԳԸ աշխատանքների կազմակերպումը ընթացել է հետևյալ չորս հիմնական ուղղություններով՝

- հանրապետական և միջբուհական միջոցառումներ,
- ֆակուլտետային գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, կլոր սեղաններ և հանդիպում-դասախոսություններ,
- ֆիլմի դիտումներ,
- արտահամալսարանական (արտագնա) միջոցառումներ:

2010/2011 ուստարում ԵՊՀ մշակույթի կենտրոնը շարունակել է իրականացնել իր առջև դրված խնդիրները, որոնք են՝ համակարգել և գեղարվեստական բարձր չափանիշներով անցկացնել Երևանի պետական համալսարանի շրջանակներում և նրանից դուրս կազմակերպվող մշակութային միջոցառումները և համապատասխան աշխատանքներ իրականացնել համալսարանական ուսանողության մշակութային դաստիարակության ուղղությամբ:

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի 2010/2011 ուսումնական տարվա գործունեությունը նպատակաուղղված է եղել համալսարանականների մրցունա-

կության բարձրացմանը, աշխատաշուկայի մարտահրավերներին դիմակայմանը, գործատուին ճիշտ ներկայանալու հմտությունների ձեռքբերմանը, շրջանավարտների և համալսարանի միջև մշտական կապի ամրապնդմանը, ուսանող-գործատու համագործակցության հաստատմանն ու զարգացմանը:

Հաշվետու ուստարում կենտրոնի կողմից իրականացվել են մի շարք ծրագրեր և միջոցառումներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի՝ պարբերաբար կազմակերպվող սեմինար-դասընթացներ, ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումներ, ինտերնշիփերի և ուսանողական պրակտիկայի, կամավորական աշխատանքների կազմակերպում, աշխատանք ձեռք բերելու հնարավորությունների ընձեռում:

Ստեղծման առաջին օրվանից ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության աշխատանքներն ընթացել են ներքին և արտաքին հաղորդակցության, Երևանի պետական համալսարանին վերաբերող հրապարակումների վերլուծության, Երևանի պետական համալսարանի վարկանիշի բարձրացման, համալսարանական տպագիր և էլեկտրոնային միջոցների, համալսարանին վերաբերող տեսանյութերի մշակման և մի շարք այլ ուղղություններով: Այստեղ ևս շատ անելիքներ կան՝ հատկապես Երևանի պետական համալսարանի դրական իմիջը տարածելու ուղղությամբ:

### **Իջևանի մասնաճյուղ**

Իջևանի մասնաճյուղը իրականացրել է իր առջև դրված նպատակների ու խնդիրների առաջընթացն ապահովող ուսանողամետ ռազմավարական ծրագիր: Դրա համար կրթօջախն ունի համապատասխան նյութատեխնիկական բազա, բարձր որակավորմամբ դասախոսական կազմ, որ հրավիրված է Երևանի պետական համալսարանից և համալրված՝ գիտական կոչումներ ունեցող և մասնագիտական բարձր կարողությունների տեր տեղացի կադրերով:

***Երևանի պետական համալսարանի 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով 2010/2011 ուստարում նախատեսված գործողությունների ներկայացում:***

Իրականացվել է մասնագիտությունների ճշգրտում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում՝ ուղենիշ ունենալով եվրոպական ծրագրային չափանիշները:

Ձևավորվել ուսումնական խորհրդատուների ինստիտուտ առանձին մասնագիտությունների և կրթական աստիճանների համար՝ ներառելով Համալսարանի առավել փորձառու դասախոսներին և կանոնակարգելով նրանց պարտականություններն ու իրավունքները: Ընդլայնվել կրեդիտային համակարգի կիրառության տիրույթը՝ ընդգրկելով հեռակա ուսուցումը, ասպիրանտուրան և հետբուհական լրացուցիչ կրթության համակարգը: Իրականացվեն դասախոսական կազմի բազմաչափ գնահատում՝ ըստ մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության, անձնային որակների և տարիքային կազմի:

Վերոնշյալ գործողության իրականացման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրին զուգընթաց կատարվում է նաև Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի բազմաչափ գնահատում: Ըստ տարիքային կազմի և անձնային որակների գնահատումն ավարտվել է, իսկ համապատասխան ուսումնասիրությունը կամբողջացվի ընթացիկ ուսումնական տարվա ավարտին:

Խթանվել է տեղեկացման էլեկտրոնային ձևերի և էլեկտրոնային ստորագրության պրակտիկայի ներդրումը Համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառության մեջ: 2012թ. նախատեսվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի կիրառման մեկնարկը: Ինչ վերաբերում է ուսանողական օժանդակ ծառայությունների մատուցման ասպարեզում միջազգային լավագույն փորձին հետևելուն, ապա պլանավորվել, կանոնակարգվել և իրականացվել է շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքման գործընթացը՝ շրջանավարտների և հիմնական գործատուների հետ ստեղծելով հետադարձ կապի մեխանիզմներ:

Այս ուղղությամբ տարվող աշխատանքներում կարևորագույն քայլ է նաև ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի պաշտոնական կայքէջի բացումը, որը շրջանավարտների պորտալի ստեղծման գործում առաջին քայլն է: Ներմուծվել է գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների (ԳԱՑ) համակարգ համալսարանի գործունեության բոլոր հիմնական բնագավառների համար և ընդունել այն որպես հիմք՝ համալսարանի և ֆակուլտետների տարեկան գործունեության արդյունքների վերլուծության և հաշվետվության համար: Կատարելագործվել են դասախոսների,

վարչական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության և առաջխաղացման մեխանիզմները՝ ապահովելով այդ գործընթացների անաչառությունն ու թափանցիկությունը և կատարել համապատասխան փոփոխություններ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման ընտրությունների կարգում՝ մրցույթների անցկացման ժամանակ կարևորելով դասախոսների անձնային և բարոյահոգեբանական հատկանիշները՝ հատկապես հաշվի առնելով ուսանողների և շրջանավարտների հարցման արդյունքները:

Առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների և շրջանավարտների հարցման արդյունքներին, որոնք այնուհետև տրամադրվում են ֆակուլտետներին՝ քննարկման և համապատասխան միջոցառումների և առաջարկությունների մշակման նպատակով: Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են նաև դասախոսների պաշտոնավարման և առաջխաղացման համար անցկացվող մրցույթներում: Հարկ է նշել, որ վերոհիշյալ հարցումների համակարգը հանդիսանում է նաև ԵՊՀ հակառուսացիոն միջոցառումների կարևորագույն բաղադրիչը և էապես նպաստում է համալսարանում կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացներին: Այս խնդրի լուծման գործում դերակատարում կունենա նաև կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման ծրագիրը, որի իրականացման առաջին փուլի արդյունքներով կկատարվի դասախոսական կազմի բազմաչափ գնահատում: Գնահատման արդյունքները հիմք են ծառայում դասախոսական կազմի ատեստավորման և նոր կարգով մրցույթների անցկացման համար, ինչը առավել թափանցիկ կդարձնի այդ գործընթացները:

***Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրով 2011թ. նախատեսված գործողությունների ներկայացում:***

ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը պահանջում է հակակոռուպցիոն գործիքակազմի ճշգրիտ ընտրություն և արդյունավետ ու համապարփակ միջոցառումների համալիր իրականացում: 2009թ. դեկտեմբերի 25-ին ԵՊՀ խորհրդի կողմից հաստատված «ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով (2010-2014թթ.)» նախատեսվում են մի շարք աշխատանքներ, որոնք ունեն ուղղակի կամ անուղղակի հակակոռուպցիոն

բնույթ: Առանձին ամրագրված է «Նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, նպաստել համալսարանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացմանը» խնդիրը, որը սահմանում է մի շարք առաջնահերթ միջոցառումներ:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի հրամանով հաստատված «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագրին» համահունչ՝ ԵՊՀ ռեկտորի 2010թ. նոյեմբերի 30-ի հրամանով ստեղծվեց կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը համակարգող հանձնաժողով, որը 2011թ. մարտի 31-ին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց «Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը (2011-2012թթ.)»: Այն, ըստ էության, «ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի» հետ համատեղ Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ արդյունավետ պայքարի հիմնական ուղենիշն է, քանի որ դրանում արտացոլված են համալսարանական միջավայրում գոյություն ունեցող կոռուպցիոն դրսևորումների դեմ նպատակային պայքարի հիմնական միջոցառումները, դրանց իրականացման արդյունքում ակնկալվող ուղղակի արդյունքները, սահմանված են պատասխանատու ստորաբաժանումները, պաշտոնատար անձինք և գործողությունների իրականացման ժամկետները: «Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի (2011-2012թթ.)» անմիջական արդյունքները հնարավորինս հստակ են, գնահատելի, իրատեսական և ունեն կատարման կոնկրետ ժամկետներ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացված միջոցառումները ներկայացված են «2011թ. ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների ամփոփում (նպատակներ, իրականացված աշխատանքներ)» աղյուսակում, որը ներկայացված է տպագրված հաշվետվությունում: Երևանի պետական համալսարանի ներկայացուցիչները մասնակցել են հայաստանյան և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպված հակակոռուպցիոն սեմինար-քննարկումներին, ներկայացրել «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի (2011-2012թթ.)» դրույթները, կատարված աշխատանքները: ՀՀ կրթության և գիտության նախարարության, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության «Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի», ԵԱՀԿ երևանյան գրասեն-

յակի կողմից կազմակերպված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում թափանցիկության և արդարության ավելացում» թեմայով միջազգային համաժողովում ներկայացվել է Երևանի պետական համալսարանի հակակոռուպցիոն փորձը: «Ապագան քոնն է» հասարակական կազմակերպության և ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության «Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի» շրջանակում կազմակերպած քննարկումներում ներկայացվել են «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի (2011-2012)» դրույթները, որի արդյունքում ԵՊՀ վարչակազմի և ուսանողների հակակոռուպցիոն դիրքորոշումներն ու մոտեցումները տպագրվել են «Կրթությունը կոռուպցիայի կանխարգելման միջոց» հակակոռուպցիոն դասընթացների և միջոցառումների կազմակերպման ուղեցույցում:

Թե կոնկրետ ինչպիսի միջոցառումներ են իրականացվել և ինչ արդյունքներ են գրանցվել, ներկայացված է տպագրված զեկույցի հավելված 2-ում:

Շնորհակալություն ուշադրության համար:

*Ձեկուցումից հետո հայտարարվեց հարցերի գրանցում:*

Ձեկուցողին հարցեր չեղան:

*Խորհրդի նախագահը առաջարկեց գրանցվել ելույթների համար:*

Գրանցվեցին՝ Մ. Գրիգորյանը, Վ. Դումանյանը, Ա. Սահակյանը, Ց. Ակոպյանը, Ա. Մելքոնյանը, Ա. Ավագյանը, Է. Մինասյանը, Ն. Մարտիրոսյանը, Ա. Մկրտիչյանը, Հ. - Ժամհարյանը:

**Մ. Գրիգորյան** – Խորհրդի մեծարգո Նախագահ, հարգելի ղեկավար, խորհրդի անդամներ, մենք լսեցինք պարոն. Սիմոնյանի հաշվետվությունը 2010/11 ուս. տարում կատարված աշխատանքների վերաբերյալ: Իրոք համալսարանում մեծ աշխատանք է կատարվել՝ բոլոր բնագավառներում, և կառաջարկեի հաշվետվությունը գնահատել բավարար: Կցանկանայի մի շատ կարևոր ձեռքբերման մասին, որն է մեր ուսումնական, գիտահետազոտական լաբորատորիաների ժամանակակից սարքերով ապահովումը: Մեզ դա հնարավորություն տվեց ավելի բարձր որակի մասնագետներ ապահովելու, ավելի լուրջ գիտական աշխատանք կատարելու միջազգային ստանդարտներին համապատասխան: Եվ այս ամենը Նախագահի անմիջական աջակցությամբ: Սակայն այդ

հարցում կան փոքր դժվարություններ կապված ավելացված արժեքով հարկի և մաքսային տուրքերի վճարման հետ: Որոշ գումարներ մենք ստանում ենք ոչ բարեգործական ճանապարհով և այդ գումարով ձեռքբերված սարքավորումները հարկվում են: - Մեծարգո Նախագահ, հնարավորության առկայության դեպքում, խնդրում ենք ուսումնական լաբորատորիաների համար ձեռքբերվող սարքավորումները ազատել ավելացված արժեքով հարկից և մաքսային տուրքերից:

Կցանկանայի խոսել մեկ այլ կարևոր հիմնախնդրի վերաբերյալ, որը պարբերաբար հնչեցվել է մեր ֆակուլտետի գիտական խորհրդում: Մենք ունենք Մարմարիկի ուսումնական բազան, որտեղ ամեն տարի իրենց պրակտիկան են անցնում ուսանողները: Մենք լավ չենք օգտագործում այդ բազան այն պատճառով, որ այն խիստ կարիք ունի վերանորոգման: Դրա պատճառով մենք կարողանում ենք բազան շահագործել ամառային մի քանի ամիսների ընթացքում: Եվ տարվա մնացած ամիսները այդ բազան չի օգտագործվում: Այս տարի առաջին անգամ պայմանագիր կնքեցինք Սանկտ-Պետերբուրգի երկրաբանական համալսարանի հետ փոխադարձ պրակտիկաներ կազմակերպելու համար և արդեն իսկ մեր երկու ուսանողներ եղել են Սանկտ-Պետերբուրգում, իսկ նրանց ուսանողները մեզ մոտ: Նման պայմանագրեր մենք նախատեսում ենք կնքել Իտալիայի, Գերմանիայի և այլ երկրների համալսարանների հետ: Սանկտ-Պետերբուրգի համալսարանի ղեկավարությունը ցանկություն է հայտնել մեզ օգնել նշված բազան վերանորոգելու հարցում: Օգտվելով առիթից, ցանկանում եմ դիմել մեր խորհրդի անդամներին, հնարավորության դեպքում ձեռք մեկնել, օգնել գտնել բարերարներ տվյալ բազայի վերանորոգման համար, որը կարելի է օգտագործել ոչ միայն մասնագիտական պրակտիկաների անցկացման համար, այլ նաև կազմակերպել համահայկական ճամբարներ: Ավարտելով խոսքս՝ ցանկանում եմ հավաստիացնել Ձեզ՝ պարոն - Նախագահ, որ մենք աջակից ենք Ձեզ բոլոր ձեր նախաձեռնություններում ուղղված մեր երկրի զարգացմանը, խաղաղության պահպանմանը:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Քանի-որ ավելացված արժեքի հարկը և մաքսատուրքը կազմում է յուրաքանչյուր ապրանքի գնի բաղկացուցիչ մասը, ապա անհնար է որոշ կազմակերպությունների ազատել այդ հարկից, մյուսներին՝ ոչ: Եթե խոսքը գնում է բարեգործական գումարների մասին, ապա կառավարությունը ունի հատուկ հանձնաժողով, որը կարող է որոշում կայացնել ցանկացած առանձին դեպքի վե-

րաբերյալ: Բոլոր կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքներն էլ կարևոր են և կառավարությունը տարբերակված մոտեցում չի կարող ցուցաբերել:

Երկրորդ հարցի կապակցությամբ կցանկանայի նշել, որ հենց ձեր ոլորտը Հայաստանում աննախադեպ զարգացում է ապրում և լավ կլիներ, որ դուք փորձեիք կնքել պայմանագրեր՝ ներգրավվելու համապատասխան միջոցներ բազայի վերանորոգման համար: Միշտ չէ, որ պետք է հույս դնել պետական բյուջեի միջոցների վրա, այլ փորձել գործ ունենալ մասնավոր սեկտորի ձեռնարկությունների հետ, իսկ պետությունը իր մասով աջակից կլինի:

**Վ. Դումանյան** – Մեծարգո Նախագահ, հարգարժան ռեկտոր, հարգելի անդամներ, ես առաջարկում եմ ռեկտորի կատարած աշխատանքին տալ հավանություն, որովհետև, իմ խորին համոզմամբ, իրենից կախված ամեն ինչ ինքը արել է, որպեսզի մեր գործունեության մեջ գրանցվի առաջընթաց: Սակայն մենք չխոսեցինք, իմ կարծիքով ամենաառաջնահերթ խնդրի մասին, որն է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի սոցիալական և հատկապես աշխատավարձի հետ կապված լրջագույն խնդիրներն են: Մեր աշխատավարձերը անմխիթար վիճակում են և մեր միջոցները չեն բավականացնում այդ խնդրին որակական լուծում տալու համար: Սա ոչ միայն սոցիալական, այլև երիտասարդ կադրերի ընդգրկման խնդիր է՝ մասնավորապես, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում, երիտասարդ կադրերը մեկ, մեկուկես տարի անց գնում են ավելի բարձր վարձատրվող աշխատանքի՝ առավելապես արտերկրում: Մենք այս հարցում ոչինչ անել չենք կարողանում: Կցանկանայի հարցնել, թե Դուք՝ պարոն Նախագահ, ինչ ուղիներ եք տեսնում տվյալ խնդրի լուծման համար:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – պարոն Դումանյան, Ձեր բարձրաձայնած հարցին կպատասխանեմ փոքր-ինչ ավելի ուշ:

**Ա. Սահակյան** – Մեծարգո պարոն Նախագահ, խորհրդի հարգարժան անդամներ, ես նույնպես առաջարկում եմ հավանություն տալ ռեկտորի հաշվետվությանը և համալսարանի 2010/11 թվականի կատարած աշխատանքները գնահատել բավարար: Ես նույնպես միանում եմ պարոն Դումանյանի առաջադրած խնդրին՝ համարելով այն չափազանց կարևոր և մեր ֆակուլտետի օրինակով կարող եմ նշել, որ չափազանց դժվար է երիտասարդ մասնագետներին համալսարանում պահելը: Եվ կցանկանայի անդրադառնալ ևս մեկ հարցի, որը բարձրացրել եմ Խորհրդի անցած տարվա նիստում՝



այն է համալսարանի շրջանավարտներին ուսուցչի որակավորում շնորհելն է: Անցած տարվա իմ ելույթի ժամանակ, բոլորը հասկացան հարցի կարևորությունը և հարցը բավական արագ լուծում ստացավ, մենք ստացանք նախարարության համապատասխան հրահանգը, ինչի համար ես շնորհակալություն եմ հայտնում և այժմ մեր շրջանավարտները ստանում են որակավորում՝ մաթեմատիկայի բակալավր, ուսուցիչ: Ցավոք խնդիրը վերջնական լուծում չի ստացել, քանի որ մասնագիտական կրթության մասնագիտությունների կառավարական ցանկում նման որակավորում չկա: Ստացվում է, որ այս պահին մենք տալիս ենք որակավորում, որը կառավարության ցանկում չկա: Մենք հարցը բարձրացրել ենք և որակավորումների ցանկը այժմ ճշգրտման փուլում է և ես խնդրում եմ, որ այդ հարցը մոռացության չտրվի:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Ես կարծում եմ, որ պարոն Աշոտյանը հետամուտ կլինի այդ որոշման կայացման գործընթացին:

**Ց. Ակոպյան** – Մեծարգո պարոն նախագահ, նախ թույլ տվեք շնորհակալություն հայտնել հանդիպման մեր առաջարկությանը անմիջապես արձագանքելու համար: Մեծարգո պարոն Նախագահ, խորհրդի հարգելի անդամներ, հարգելի ռեկտոր, թույլ տվեք շատ կարճ խոսել մի քանի հարցերի մասին: Մեր կարծիքով Երևանի պետական համալսարանի խնդիրները չեն կարող երկրի խնդիրներից առանձին լինել: Մենք չենք կարող ունենալ լավ համալսարան, եթե ունենք որոշակի խնդիրներ կրթական համակարգի ոլորտում: Ուստի մեր կարծիքով համալսարանի խնդիրները պետք է դիտել բարձրագույն կրթության խնդիրների համատեքստում: Մենք առաջարկում ենք որոշակիորեն վերանայել օրենսդրությունը, քանի-որ շատ են խնդիրները, որոնք կապված են չգործող իրավական փաստաթղթերի հետ: Առաջարկում եմ ուշադրություն դարձնել ճիշտ կադրային քաղաքականությանը բուհական ոլորտում: Եվ մյուս հիմնական խնդիրը կոռուպցիոն երևույթների առկայությունն է, որոնք չեն առաջացել մեկ օրում և բնականաբար լուծելի չեն մեկ օրում: Ուսանողությունը պատրաստ է պայքարել այդ չարիքի դեմ և առաջարկում ենք ավելացնել հետազոտությունների քանակը, անցկացնել համեմատականներ նախորդ տարիների տվյալների հետ: Թույլ տվեք անդրադառնալ մեկ այլ կարևոր խնդրի: 2012-2013 թվականները մեր երկրի համար բեկումնային են լինելու և բնականաբար մի շարք գործընթացների հետ կապված շատ քաղաքական ուժեր փորձելու են ուսանողությանը ներքաշել քաղաքական գործընթացների մեջ, սակայն

մենք հայտարարում ենք, որ կանգնած ենք լինելու երկրի ղեկավարի կողքին՝ իրավա-  
կան պետության կառուցման, ժողովրդավարական արժեքների ամրապնդման գոր-  
ծում, որովհետև ճանաչում ենք Ձեզ, կիսում ենք Ձեր գաղափարները և գիտենք Ձեր  
դերը հայոց պետականաշինության գործընթացում: Համոզված ենք որ ապագան ո-  
րակյալ կրթությանն է, գիտելիքահենք տնտեսությանը, այլ ոչ թե «գոռբաների» և օլի-  
գարխների պատկերացրած իրականությունը: Վերջում առաջարկում ենք, որպեսզի  
հայոց ցեղասպանության 100 ամյակին ընդառաջ Երևան քաղաքում ինչ-որ վայրում  
կառուցել 1940 թվականին ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունման և ցեղասպանության և դրա  
պատճառների կանխման օրենքի հեղինակ Ռաֆայել Լեմկինի հուշարձանը: Շնորհա-  
կալություն ուշադրության համար:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Իհարկե Լեմկինը մեծ գործ է կատարել և -  
մենք այդ խնդրին կանդրադառնանք, սակայն այսօր մեզ համար ավելի կարևոր է ցե-  
ղասպանության թանգարանի վերակառուցումն ու ընդլայնումը, որովհետև կարծում եմ  
ցեղասպանության թանգարանը մի փոքր այլ տեսք և հնարավորություններ պետք է  
ունենա, քանի-որ այն ոչ միայն թանգարան է, այլ նաև ինստիտուտ, որտեղ պետք է գի-  
տական աշխատանքներ տարվեն: Կարծում եմ, ճիշտ կլինի, առանց հուշահամալիրի  
արտաքին տեսքը խաթարելու այնտեղ մի եկեղեցի էլ կառուցել և այնուհետև  
տարածքում ինչ-որ տեղ դնել այն մարդկանց կիսանդրերը, ովքեր դերակատարում են  
ունեցել հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում:

**Ա. Մելքոնյան** – Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ, խորհրդի  
հարգարժան անդամներ, ես ցանկանում եմ անդրադառնալ մի կարևոր խնդրի, որը վե-  
րաբերում է ՀՀ արտաքին քաղաքականությանը՝ մեր խնդիրների կոնտեքստում: Վեր-  
ջին տարիների մեր արտաքին քաղաքականությունը, ես՝ որպես պատմաբան, գնահա-  
տում եմ շատ հավասարակշռված և այդ տեսանկյունից կարևորում եմ հայ-վրացական  
հարաբերությունները, որը մենք պետք է տեսնենք նոր հարթության մեջ: Այսօր պետա-  
կան լեզվի հարցում վրացիները շատ նախանձախնդիր են և մենք փոքր-ինչ արդեն  
ուշացել ենք, և Երևանի պետական համալսարանի ձեռքբերումների մեջ կցանկանայի  
առանձնացնել Կովկասագիտության կենտրոնի ստեղծումը: Այսօրվա ռուս-վրացական  
լարված հարաբերությունների պայմաններում կառուցել մեր հարաբերությունները Վ-  
րաստանի հետ ռուսերենով այլևս անհնար է: Մենք պետք է ունենանք վրացագետների

մեծ բանակ: Ստացվել է մի իրավիճակ, երբ Վրաստանի Կրթության և գիտության նախարարությունը հնարավորություն է ընձեռում Ջավադքի ուսանողների համար մեկ տարի Թիֆլիսում վրացերեն ուսումնասիրելուց հետո՝ անվճար սովորել իրենց բուհերում: Նրանց շրջանավարտները մասնագիտանալով վրացերենում կարողանում են այլ մտահորիզոնով, աշխարհայացքով Ջավադքում աշխատել: Մեր ջավադքահայ շրջանավարտները առանց վրացերենի իմացության և դիպլոմում առանց այդ առարկայի առկայության, վերադառնալով Ջավադք, աշխատանք չեն գտնում: Ես ցանկանում եմ առաջարկել բոլոր ջավադքցի ուսանողների համար պարտադիր կամ ֆակուլտատիվ, անկախ մասնագիտությունից, մտցնել վրացերենի ուսուցում և դա կատարել Երևանի պետական համալսարանի բազայի հիման վրա: Նրանք որպես հայ մարդիկ վերադառնալով Ջավադք կկարողանան աշխատանք գտնել: Եվ երկրորդ՝ ես չեմ կարող չխոսել հայ-թուրքական հարաբերություններից և կարծում եմ, որ մեր քաղաքականությունը շատ արժանապատիվ է: Կարող է ստեղծվել մի իրավիճակ, որ սառեցված հայ-թուրքական հարաբերությունները նորից գան օրակարգ և հնարավոր է մի իրավիճակ, որ թուրքերը վավերացնեն սառեցված փաստաթղթերը: Ըստ երևույթին մեր խորհրդարանը կարող է մեխանիկորեն ստիպված լինի հետևել Թուրքիայի խորհրդարանին և ևս վավերացնել դրանք: Ես կարծում եմ, որ Թուրքիայի նման վերաբերմունքից հետո մեր Ազգային ժողովը չպետք է մեխանիկորեն հետևի դրան: Դրա համար պետք է մտածել վերապահումների մասին: Ինչ վերաբերվում է Երևանի պետական համալսարանի գործունեությանը, ես նույնպես բարձր եմ գնահատում և իմ հնարավորությունները ի սպաս կդնեմ վրացագիտության բաժնում մեր խնդիրները լուծելու համար:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Իհարկե, պարոն Մելքոնյան, շատ ճիշտ մոտեցում է, որ ջավադքահայ ուսանողները, ովքեր պատրաստվում են որպես մասնագետներ վերադառնալ Ջավադք, տիրապետեն վրացերենին: Շատ պարզ և պրագմատիկ մոտեցում է, որ մենք պետք է կարողանանք անել: Կարծում եմ, որ դա կարելի է անել կենտրոնի հիման վրա և այդ ծախսը համապատասխան մարմինները կհոգան: Այլ ճանապարհ չկա, եթե այդ մարդիկ ցանկանում են ապրել և աշխատել Ջավադքում: Ինչ վերաբերվում է հայ-թուրքական հարաբերություններին, նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել, որովհետև միակ մարդը Դուք եք, որ այն ժամանակ կոշտ քննադատում էիք մեր գործելակերպը և այժմ ընդունում եք, որ մենք ճիշտ ենք: Ուժեղ մարդու պահ-

վածք է դա և մենք ողջունում ենք այդպիսի պահվածքը: Ինչ վերաբերվում է Ձեր հարցերին և խորհուրդներին, կարծում եմ, որ այսօր դեռևս ժամանակավրեպ է այդպես վարվելու համար, դա կնշանակի մեր երկու-երեք տարվա կատարած աշխատանքը ուղղակի ջուրը նետել: Այսօր շատերը նշում են, որ մենք շատ արժանապատիվ աշխատանք ենք վարում: Ամեն ինչ նորմալ է լինելու, այդ թվում նաև Ձեր խորհուրդներով:

**Ա. Ավագյան** – Խորհրդի մեծարգո նախագահ, հարգելի ռեկտոր, սիրելի բարեկամներ, ես ելույթ եմ ունենում խորհրդի բոլոր նիստերում: Ես միշտ սրտացավ եմ մոտենում այն հարցերին, երբ մենք ոչ ամբողջապես ենք օգտագործում մեր հնարավորությունները: Ես ցանկանում եմ խոսել մեր եթերի մասին, որը իր 80%-ով հակադաստիարակչական է: Կասեմ միայն մի օրինակ: «Շանթ» հեռուստաընկերությամբ հեռարձակվում է մեր բանակին նվիրված մի հեռուստաշարք և բավական է, որ դրա կադրերից մի քանիսը հայտնվեն ադրբեջանական կողմում, ապա մեր ամբողջ բանակը վարկաբեկված կլինի: Լեզուն գռեհիկ է, առօրեական, իսկ բովանդակությունը՝ սարսափելի և վարկաբեկող: Եթե մեր երկրում գոնե մեկ ոլորտ կայացել է, ապա դա մեր բանակն է և բանակի հանդեպ նման վերաբերմունք, անընդունելի է: Կցանկանամ նաև անդրադառնալ մեկ այլ հարցի: Հայտնի է, որ մոնոպոլիան չարիք է և շատերս ենք տուժում դրանից: Մեր ֆակուլտետում տարիներ շարունակ գործում է մանկավարժության ամբիոն: Վերջին տասնամյակում այդ ամբիոնը ընդլայնվել է, գիտական նոր կադրեր են ներգրավվել, արդեն երկրորդ տարին է ընդունելություն ենք կատարում սոցիալական մանկավարժության բաժնում, ստեղծվել է երկու մագիստրոսական ծրագիր, որոնք ունեն շրջանավարտներ, ամբիոնն ունի հանրապետությունում ճանաչված շատ դասախոսներ: Արդեն ժամանակն է, որ համալսարանում բացվի մանկավարժության տեսության և պատմության աստիճանաշնորհման խորհուրդ: Դա մեզ իսկապես կօգնի: - Շատ պաշտպանություններ չեն լինում՝ տարեկան 4-5, սակայն դրանք որակով պաշտպանություններ են:

Կցանկանամ խոսել նաև մեկ այլ հարցի մասին: Դիլիջանը Հայաստանի չքնաղ վայրերից է և մենք այնտեղ ունենք ուսանողական բազա, որը գտնվում է ավերակ վիճակում: Ես խնդրում եմ Ձեր աջակցությունը Դիլիջանի այդ «ոսկե կտորը» փրկելու համար, որը շատ անհրաժեշտ է մեր ուսանողներին: Շնորհակալություն ուշադրության

համար և ես նույնպես առաջարկում եմ ռեկտորի հաշվետվությունը գնահատել բավարար:

**Է. Մինասյան** – Մեծարգո նախագահ, խորհրդի հարգարժան անդամներ, մենք լսեցինք ռեկտորի հաշվետվությունը, ես նույնպես միանում եմ առաջարկներին և ևս առաջարկում եմ հաշվետվությունը բարձր գնահատել: Ավելի շատ կցանկանամ խոսել հայագիտության խնդիրների մասին, անձամբ շնորհակալություն հայտնել նախագահին հայագիտությունը որպես ռազմավարական գերակա ուղղություն հայտարարելու հետ կապված: Հայագիտությունը ուղղված է ոչ միայն ազգային արժեքների ամրապնդմանը, այլև ազգային ինքնության ձևավորմանը և երիտասարդ սերնդի հայեցի կրթմանը: Հաշվետու տարում հայաստանում հայագիտական աշխատանքային խումբը մեծ աշխատանք տարավ և պատրաստեց հայագիտության հայեցակարգը, որը մի քանի օր առաջ ընդունվեց ՀՀ կառավարության կողմից: Այն հնարավորություն է տալիս ունենալ եռալեզու հայագիտական հանդես՝ մեր նվաճումները արտասահմանում ներկայացնելու համար: Ցանկանում եմ նաև նշել, որ հայագիտության զարգացման ուղղությամբ մեծ աշխատանքներ է տարել Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, որի կազմի մեջ են նաև պատմության ֆակուլտետի պատմական աշխարհագրության և հնագիտության գիտական լաբորատորիաները, որոնք ակտիվ մասնակցել են Առաջին հանրապետության ատլասի պատրաստման և պեղումների կազմակերպման ուղղություններով: Հրատարակվել են հինգ գիտական մենագրություններ, տասից ավելի քարտեզներ: Այս տարի հնարավորություն ունեցանք նաև բացել Կովկասագիտության բաժինը, որը իսկապես կարևոր է բազային հայագետ-կովկասագետ պատրաստելու համար: Ֆակուլտետում տարվում են նաև ռազմահայրենասիրական դաստիարակության դասեր, կոնֆերանսներ, մշակութային միջոցառումներ և այլն: Կցանկանալի նաև առաջարկել շարունակել և ավելի հաճախակի դարձնել մեր դասախոսների այցելությունները բանակ, ինչպես նաև ցանկալի կլիներ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի բազայի էլ ավելի ընդլայնում և զարգացում:

**Ն. Մարտիրոսյան** – Մեծարգո նախագահ, խորհրդի հարգարժան անդամներ, կցանկանալի անդրադառնալ մի քանի մտահոգությունների, սակայն սկզբում կխոսեմ ձեռքբերումներից: Ոչ վաղ անցյալում ես խոսել էի Երևանի պետական համալսարանի 7-րդ մասնաշենքի վերանորոգման մասին և ուրախ եմ, որ այսօր 4-րդ և 5-րդ հարկերը

արդեն ապահովում են այն կենսական տարածքը, որն անհրաժեշտ է ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու համար, ուրախ եմ նաև, որ այդ գործընթացը շարունակվում է: Իրական է այն մտահոգությունը, որ բանակը թիրախ է դարձել այն լրատվամիջոցների համար, որոնք նույնիսկ մեկ լուրն է փոխանակում բանակի կայացման գործում: Ես մտածում եմ, որ պատերազմող երկրի պայմաններում հայոց բանակի «լեգենդը սպանելու» ճանապարհը ոչ մի լավ բանի չի կարող հասցնել: Դժբախտ պատահարներ բոլոր բանակներում էլ լինում են, սակայն մեզ մոտ, տպավորություն է ստեղծվում, որ բոլորը դրան են սպասում: Չեմ կարող չխոսել նաև եթերի մասին: Իմ կարծիքով եթերում կան հաղորդաշարեր, որոնք թաքուն կամ բացահայտ արտագաղթի քարոզչություն են իրականացնում՝ հաղորդաշարեր, որոնց հեղինակները ցուցադրում են Հայաստանից հեռացած և արտասահմանում բնակություն հաստատած մարդկանց, որոնք այնտեղ լավ են ապրում: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ՝ պարոն Նախագահ, ձեր ամանորյա ուղերձում ընտանիքի դերը կարևորելու համար, որը իսկապես կարևոր է պետականության կայացման համար: Եվ քանի որ շուտով լրանալու է «Շախմատային հանդես»-ի և հեռուստահաղորդման 40 ամյակը և դրանց հիմնադիր և վարող Գագիկ Հովհաննիսյանի 65 ամյակը, առաջարկում եմ այդ հոբելյանները կազմակերպել ՀՀ շախմատի ֆեդերացիայի և Ժուռնալիստիկայի ֆակուլտետի համատեղ ջանքերով: Շնորհակալություն:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Ինչ վերաբերում է հոբելյաններին, ապա հաճույքով կկազմակերպենք, իսկ մյուս հարցերի հետ կապված ունեմ մի քանի նկատառումներ: Ես ողբերգություն չեմ տեսնում նրանում, որ որոշ մարդիկ քաղաքականացնում են բանակում առկա խնդիրները, որոնք առկա են նաև աշխարհի ուրիշ գործող բանակներում: Ակնհայտ է, որ խնդիրները քաղաքականացվում են, ակնհայտ է, որ կա այլ շահագրգռվածություն, սակայն մենք չենք կարող փակել տեղեկատվության աղբյուրները, իբր թե դրանով կարող ենք պաշտպանել բանակը: Հանրությունում անհրաժեշտ են կարծիքներ արտահայտող մարդիկ, որոնց դաստիարակները հենց Երևանի պետական համալսարանը պետք է լիներ: Սա է հիմնական խնդիրը, որ հանրությունը չի արձագանքում և ստիպված են պետական պաշտոնյաները ամեն ինչ մեկնաբանել: Թվերը խոսում են այլ բանի մասին, 2011թ.-ին Հայկական բանակում զոհվել և մահացել են 30 ժամկետային զինծառայող, որը ամենացածր թիվն է նախորդ տարիների

համեմատ: Դա էլ շատ է, դա 30 ընտանիքի հոյս է, 30 ընտանիքի ողբերգության պատճառ է և սա հասկանալի է, սակայն ամեն ինչ պետք է գնահատվի համեմատության մեջ: Ո՞ր են ձեր պատրաստած լրագրողները, ո՞ր եք Դուք, որ չեք արձագանքում, բացատրում, կատարում վերլուծություններ: Ամեն ինչ թողնում եք պետական պաշտոնյաների վրա, որոնց արտահայտած տեսակետը այնքան էլ հաճույքով չի ընկալվում հասարակությունում: Անհրաժեշտ են անաչառ վերլուծություններ կատարող մարդիկ, որոնք կարող են իրավիճակը մատուցել հանրությանը: Երկրորդ նկատառումը հետևյալն է՝ որոշեք, թե որն է ձեզ համար ավելի կարևոր՝ Դիլիջանի պանսիոնատը, թե բանասիրականի շենքը: Բոլորդ տարբեր առաջնայնություններ եք դնում և հնարավոր չէ բոլորը միասին լուծել: Մենք պատրաստ ենք 2012թ.-ի ընթացքում որևէ խնդիր լուծել:

**Ա. Մկրտիչյան** – Մեծարգո պարոն Նախագահ, խորհրդի հարգարժան անդամներ, ես այսօր ինձ իրավունք եմ վերապահում բարձրաձայնել մի հարց, որը մտահոգում է շատ համալսարանականների: Դա վերաբերում է տեղեկատվական դաշտին: Հաշվետու տարում ես ֆակուլտետի մի խումբ ուսանողների հետ Ֆրանկֆուրտում մասնակցում էի միջազգային ամառային դպրոցի և շատ ոգևորիչ էր, երբ Գերմանիայի առաջատար թերթերից մեկը հոդված տպագրեց այդ միջոցառման մասին: Պարզվում է, որ այդ հեղինակավոր թերթը ունի բարձրագույն կրթությանը նվիրված հատուկ էջ: Ամբողջ էջում չկա մի տող, ուր բացասական որևէ բան գրվի գերմանական որևէ համալսարանի մասին: Մենք աշխատում ենք լիովին այլ պայմաններում: ԶԼՄ-ները գրում են առավելապես բացասական երանգներով, և հաճախ որոշ հայ գրչակներ փորձում են նաև մեզ վարկաբեկել արտասահմանում: Օրինակ, միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի կայքում տեղադրված է մի հոդված «Համալսարանները ճգնաժամում» խորագրի ներքո, որտեղ մեր հայաստանցի հեղինակը, կեղծ փաստեր բերելով, անգամ համալսարանի ֆակուլտետների թիվը սխալ նշելով, անհիմն մեղադրանքներ է ներկայացնում և եզրակացնում, որ հայ ուսանողների ելքը արտասահմանյան բուհերում սովորելն է: Այս ամենը մտահոգիչ է, քանի որ նման հոդվածները վարկաբեկում են ոչ միայն Երևանի պետական համալսարանը, այլև բարձրագույն կրթության ողջ համակարգը: Մոտ 20 օր առաջ մեր երիտասարդ մի աշխատակցի հետ զրուցելիս պարզեցի, որ նա համալսարանում աշխատավարձի համար չի աշխատում, այլ ցանկանում է լինել ըստ արժանվույնս գնահատված: Մենք համալսարանականներս ցանկանում ենք լինել գնա-

հատված: Կարելի է դժգոհել աշխատավարձից, սակայն մարդիկ թողնում և հեռանում են ոչ թե այդ պատճառով, այլ այն ժամանակ, երբ ինքնությունն է վիրավորվում: Իսկ համալսարանական լինելը մեր ինքնության մասն է կազմում: Ցանկանում եմ կոնկրետ առաջարկ անել: Հանրային հեռուստաընկերությունը գոյատևում է հարկատուների գումարների հաշվին և լինելով խոշոր հարկատու՝ իրավունք ունենք եթերում ամիսը գոնե մեկ ժամ ունենալ, որի ընթացքում կլուսաբանվեն և բարձրագույն կրթության հիմնախնդիրները, և գիտության հիմնախնդիրները հնարավորություն կունենան ելույթ ունենալու համապատասխան գիտնականներ, հասցնելու իրենց խոսքը: Խնդրում ենք օգնել մեզ գտնելու արտահայտվելու նման հարթակ: Վերջում միանում եմ իմ գործընկերների առաջարկություններին, առաջարկում եմ հավանություն տալ ռեկտորի հաշվետվությանը, ինչպես նաև համալսարանի գործունեությունը գնահատել դրական:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – պարոն Մկրտիչյան, ես փոքր-ինչ զարմացած եմ ձեր դիտարկումներից, քանի-որ համոզված եմ, որ և Հանրային հեռուստաընկերությունը, և այլ լրատվամիջոցներ այդ հնարավորությունները ընձեռում են: Ես կարող եմ հիմա առնվազն մի քանի հաղորդաշարեր ասել, որոնց պահպանման համալսարանի ջանքերը մեծ են և կան բազմաթիվ հարթակներ, որոնք ճշմարիտ, ուղիղ խոսքի ուղղակի հնարավորություններ են ընձեռում: Երկրորդ, Դուք մի զարմացեք, որ Հայաստանը Գերմանիա չէ: Գերմանիան զարգացման երկարատև ճանապարհ է անցել և որպես մասնագետ՝ պետք է լավ ընկալեք որ ձեր նշած լրատվամիջոցը ևս տասնամյակների պատմություն ունի և վաղուց հաղթահարել է իր կայացման փուլը ու չի կոչվում «դեղին մամուլ»: Պետք է այդ քննադատություններին հանգիստ վերաբերվել, իսկ համալսարանականներին գնահատելու ուղղությամբ մեծ աշխատանք տանում ենք: Համալսարանից հեռանալու համար յուրաքանչյուր հեռացող կարող է բազմաթիվ պատճառներ գտնել՝ և ֆինանսական, և բարոյական: Պատասխանելով նաև պարոն Դոմանյանի հարցին, ասեմ, որ կարելի է տեսնել, թե ասենք տասը տարի առաջ ինչքան էր համալսարանում աշխատավարձը և այսօր ինչքան է: Կարող ենք նաև համեմատել հինգ տարի առաջվա տվյալները: Մենք չենք կարող մեր գիտական հաստատություններում ապահովել այնպիսի աշխատավարձ, ինչպիսի աշխատավարձ կարող են ապահովել Եվրոպական համալսարաններում: Դա տեսանելի ապագայում որևէ մեկը ոչ կարող է խոստանալ, առավել ևս՝ կատարել: Այսօր համալսարանում դասախոսական միջին



աշխատավարձը 140000 դրամ է, որը ավելի բարձր է, քան հանրապետության միջին աշխատավարձը: Իհարկե, սա ցածր է, սակայն ժամանակի ընթացքում մենք ավելացումներ գրանցում ենք: Ես չեմ կարծում, որ երիտասարդ գիտնականների մեծ մասը արտասահմանում կարող է անհամեմատ ավելի շատ վաստակել և ապրել, սակայն եթե կան մարդիկ, որ կարող են դրսում աշխատել և հեղինակություն ձեռք բերել, ապա ես խնդիր չեմ տեսնում, որ նրանք առավելագույնս դրսևորվեն այնտեղ: Նույն գաղափարախոսությամբ գործում է նաև «Լույս» հիմնադրամը: Ես իրական չեմ համարում, որ տեսանելի ապագայում մենք կկարողանանք, ասենք, հարյուր անգամ աշխատավարձ բարձրացնել, սակայն այն, որ ինչ-որ ժամանակահատվածում, մենք աշխատավարձերը կկրկնապատկենք և ավելացումները տարեցտարի են լինելու, դա փաստ է:

**Հ. Ժամհարյան** – Մեծարգո Նախագահ, հարգարժան ռեկտոր, հարգարժան խորհուրդ, միանում եմ իմ գործընկերներին և առաջարկում եմ համալսարանի և ռեկտորի գործունեությունը գնահատել բավարար և ցանկանում եմ անդրադառնալ երկու հարցի, որոնք համալսարանի գործունեության համար ունի էական նշանակություն: 2009թ.-ին կառավարության կողմից հաստատվել է ուսումնական նպաստների տրամադրման կարգը: 2006թ.-ից վեց տարի է մենք այդ գործընթացը իրականացնում ենք համաձայն հրահանգչական նամակի: Խոսքը բանակում ծառայած ուսանողներին նպաստների հատկացումն է: Ուսանողները, որոնք արտոնությամբ են ընդունվել, որպես բանակում ծառայածներ, համաձայն նախարարի հրամանի համարվում են նպատակային ընդունվածներ և օգտվում արտոնությունից ամբողջ ուսումնառության ընթացքում: Ավաղ, հիմա իրավիճակը փոխվել է և մեր ուսանող տղաների մեծ մասը բանակում ծառայում է ուսումնառության ընթացքում: Եվ նրանք վերադառնալով ուսման չեն օգտվում տվյալ արտոնությունից: Փաստորեն ի սկզբանե այդ արտոնությամբ ընդունվածները, անկախ իրենց առաջադիմությունից, օգտվում են արտոնությունից առանց փոխատեղման, իսկ առաջին կիսամյակից մեկնածը, վերադառնալով մասնակցում է փոխատեղման: Մեկ այլ հարցի կապակցությամբ կցանկանամ նշել, որ դրական լուծման ընթացքի մեջ է, և մենք առաջարկում ենք մագիստրատուրայում փոխատեղումը կատարել ոչ թե ըստ մասնագիտությունների, այլ ըստ կրթական ծրագրերի կամ մասնագիտացումների, որը իմ կարծիքով առավել արդար կլինի: Մեկ այլ հարց վերաբերվում է բուհ-դպրոց կապին, որն առավել ամբողջական իրականացվում է վերջին տարիներին, սակայն առա-

վել լիարժեք կապ հաստատելու համար անհրաժեշտ է ստեղծել ինստիտուցիոնալ կապ՝ որոշ կրթական օջախներ անմիջական կապելով բուհերին: Մենք ունենք կոնկրետ դեպք N114 Խ. Դաշտենցի անվան դպրոցի հետ, կապը սերտ է, այնտեղ դասավանդում են մեր դասախոսները, և մենք խնդրում ենք քննարկել և այդ դպրոցը դարձնել համալսարանի հենակետային դպրոց:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Առաջին հարցի կապակցությամբ ցանկանում եմ նշել, որ դա կառավարության կողմից քննարկման առարկա է: Կարող եք ներկայացնել համապատասխան առաջարկություն: Հենակետային դպրոց լինելու համար անհրաժեշտ են որոշակի պահանջներ և առաջարկում եմ քննարկել նախարարության հետ և տալ առաջարկություն: Կա առաջարկություն սահմանափակել ելույթները, եթե այլ առաջարկություն չկա, ես առաջարկում եմ քվեարկության դնել համապատասխան որոշման նախագիծը: Ո՞վքեր են կողմ.

1. Հավանություն տալ 2010/2011 ուսումնական տարվա ընթացքում Երևանի պետական համալսարանի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
2. Հավանություն տալ 2010-2014թթ. Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրով 2010/2011 ուստարում նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
3. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրով 2011 թվականին նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
4. Երևանի պետական համալսարանի 2010/2011 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

**Կողմ՝ 64, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Առաջարկում եմ անցնել օրակարգի մյուս հարցին և եթե դեմ չեք, զեկուցելու համար միացնենք օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերը և ապա առանձին կքվեարկենք որոշման նախագծերը:

2. Երևանի պետական համալսարանի 2011 թ. եկամուտների և ծախսերի հաշվետվության գնահատում:

3. Երևանի պետական համալսարանի 2012թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի հաստատում:

*Ձեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

**Ա. Սիմոնյան** – Սկզբում ներկայացնեմ Երևանի պետական համալսարանի 2011 թ. եկամուտների և ծախսերի կատարողականը: 2011 թ. Ֆինանսական կատարողականը դեֆիցիտային է, որը կազմել է 263 384 000 հհ դրամ: Դեֆիցիտի լրացման աղբյուր է հանդիսացել հունվարի 1-ի դրությամբ դրամական միջոցների մնացորդը, որը 2012թ-ի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1074500000: Պլանային ցուցանիշները չեն կատարվել 1%-ով: Ծախսերը գերակատարվել են 2,4%-ով: Եկամուտների 62%-ը կազմել են վճարովի ուսուցման ծառայությունները: Պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումը, որը կազմել է ընդհանուր եկամուտների 30%-ը, կատարվել է ժամանակին՝ ըստ հաստատված ժամանակացույցի: Գործառնական այլ եկամուտները կազմել են եկամուտների 3%-ը, սակայն այս հոդվածի կատարողականը կազմել է 86%, քանի որ նախատեսված եկամուտները չեն ապահովել ուսումնարտադրական բազաները, որոնց գործունեությունը 2011թ.-ին եղել է դոտացիայով: Չեն հավաքագրվել նաև փաստաթղթերի ձևակերպումներից հավաքագրվող եկամուտները, որոնց կատարողականը կազմել է 30%: Դա պայմանավորված է 2011թ.-ից դիպլոմների գումարներ չհավաքագրելու հետ: Եկամուտների 5%-ը կազմել են ոչ գործառնական եկամուտները: Այս հոդվածով է արտահայտված մասնավորապես «Լույս» հիմնադրամի կողմից համալսարանին տրամադրվող ֆինանսական աջակցությունը հարյուր միլիոն դրամի չափով, որն ուղղվել է լաբորատոր սարքավորումների ձեռքբերմանը: Հաշվետու տարում առաջին կուրսի ընդունելության հետ կապված նվազեց տարեվերջյան դրամական միջոցների մնացորդը՝ այսպես ասած «կայունության գործակիցը», սակայն Երևանի պետական համալսարանում աշխատակիցների կրճատումներ կամ աշխատավարձի նվազումներ չնկատվեցին: Դրան հակառակ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարեվերջին բոլոր աշխատակիցներին վճարվեց հավելավճար մեկ ամսվա աշխատավարձի չափով: Սրա պատճառով աշխատանքի վարձատրության ծախսերը գերակատարվեցին 6%-ով: Գերակատարվել են նաև կրթաթոշակի հոդվածով, վճարումներ պետական բյուջե հոդվածով, կոմունալ և փոստային ծախսերի, գրասենյակային ծախսերի, ծառայության ձեռքբերման ծախսերի, ոչ ընթացիկ ակտիվների ծախսերի հոդվածներով, ինչ-

պես նաև հիմնանորոգման ծախսերի հողվածով, ինչն էլ պայմանավորված է թիվ 1 մասնաշենքում հայ-հնդկական կենտրոնի նորոգման հետ: Այստեղ ծախսերը պլանավորվածից 80 միլիոն դրամով ավելին են եղել: Մնացած 11 ծախսային հողվածներում մնացել են խնայողություններ կամ դրանք չեն կատարվել եկամուտները 100% չապահովելու պատճառով: 2011թ.-ի ընթացքում կատարվել են նախատեսված բոլոր միջոցառումները: Ֆակուլտետների համար նախատեսված ընդհանուր ծախսերը կատարվել են 96,5%-ով: Մնացած ստորաբաժանումների ընդհանուր ծախսերը 91%-ով: Մեկ մարդու հաշվարկով եկամուտները կազմել են 390000 դրամ, իսկ ծախսերը 403000 դրամ:

Այժմ ներկայացնեմ 2012 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը: Երևանի պետական համալսարանի 2012 թվականի եկամուտները և ծախսերը հավասարակշռված են: Նվազել են եկամուտները նախորդ տարվա նկատմամբ առկա բակալավրիատում և ասպիրանտուրայում: Պետական բյուջեից սպասվող ֆինանսավորումը նվազում է շուրջ 7%-ով, որը կապված է գիտական գործունեությամբ նախատեսված պայմանագրերի շրջանակներում Երևանի պետական համալսարանի միջոցով գործընկեր կազմակերպություններին նպատակային ֆինանսավորման ծրագրերի կրճատման հետ: Գործառնական այլ եկամուտներից սպասվող եկամուտների ցուցանիշները ավելացել են նախորդ տարվա կատարողականի նկատմամբ, սակայն ենթահողվածներում նվազել են ուսումնա-արտադրական բազաների և փաստաթղթերի ձևակերպման եկամուտները: Ավելացել են լրացուցիչ կրթական դասընթացների եկամուտները ի հաշիվ անգլերենի TOEFL դասընթացի կազմակերպման: Տարածքի վարձակալության եկամուտները ևս ավելացել են նոր երեք պայմանագրերի շնորհիվ: Ոչ գործառնական եկամուտները ավելացել են ի հաշիվ դրամաշնորհային նախատեսված եկամուտների: Աշխատանքի վարձատրության ծախսերը նախորդ տարվա կատարողականի նկատմամբ պահպանվել են նույնությամբ, իսկ 2011թ.-ի նախահաշվի համեմատ ավելացել 6%-ով կամ 260 մլն. դրամով: Ինչպես նաև ավելացել է գիտական դրամաշնորհային ծրագրերի աշխատավարձային ֆոնդը: Կոմունալ վճարումների հողվածում կատարվել է նվազեցում 20%-ի չափով, որը պայմանավորված է տարածքի մաքրության ծախսերի կրճատման հետ: Այդ ծառայությունը նախատեսվում է կատարել Երևանի պետական համալսարանում ստեղծված սանմաքրման ստորաբաժանման կողմից: Փոստի և կապի ծախսերը ավելացել են, որը կապված է աշխատակիցների կողմից համացանցի ավելի

շատ օգտվելու հետ, ինչպես նաև դրամաշնորհային և գիտական ծրագրերի ավելացմամբ: Տրանսպորտային ծախսերի հոդվածում ավելացումը պայմանավորված է վառելիքի արժեքի բարձրացմամբ, բացի այդ պրակտիկայի կազմակերպման համար ավելացել են նաև տրանսպորտային միջոցների վարձակալության ծախսերը: Ծառայությունների ձեռքբերման ծախսերը ևս ավելացել են, որոնք պայմանավորված են գիտահրատարակչական խորհրդի որոշմամբ տպագրվող գրքերի քանակի, ինչպես նաև համալսարանի գրեթե բոլոր ստորաբաժանումների կողմից կազմակերպվող միջոցառումների թվի ավելացմամբ: Գործուղման ծախսերը հիմնականում ավելացել են ի հաշիվ գիտական գործունեության և դրամաշնորհային ծրագրերի, բացի այդ ավելացել են նաև - Սանկտ Պետերբուրգի և ԱՊՀ ցանցային համալսարանների հետ համագործակցության շրջանակներում ուսանողների գործուղման ծախսերը: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսերը նվազել են կրթաթոշակի հոդվածով, ինչը պայմանավորված է պետական պատվերի տեղերի կրճատման հետ, իսկ ուսանողական նպաստների ֆինանսավորումը պահպանվել է նույն չափով: Նախորդ տարվա նկատմամբ նվազել են հիմնանորոգման ծախսերը, իսկ նախատեսվածի 85%-ը ուղղվելու է թիվ 7 մասնաշենքի վերանորոգմանը: Ամբողջովին կրճատվել են շինարարական ծախսերը: Կազմակերպության ծախսերի 81,2%-ը պարտադիր ծախսերն են, իսկ մնացածը կազմակերպության զարգացման ծախսեր են: Միջոցառումների համար նախատեսված ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 4,5 մլն դրամով, նախատեսվել են տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման ծրագրեր, որոնք արտահայտված են նախահաշվի 75-րդ էջում: Շնորհակալություն:

*Ձեկուցումից հետո հայտարարվեց հարցերի և առաջարկությունների գրանցում:*

Ձեկուցողին հարցեր չեղան:

Առաջարկություններով հանդես եկան Գ. Հարությունյանը և Յ. Ակոպյանը:

**Գ. Հարությունյան** – Անցած տարվա ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հետ կապված երկու առաջարկ ունեմ՝ մեկը ըստ ձևի, մյուսը ըստ բովանդակության: Ես կզանկանայի, որ նման փաստաթղթերում թույլ չտրվեն սխալներ, ասենք կատարողականում տեսակարար կշիռը արտահայտված է 100-ից ավելի տոկոսներով որոշ հոդվածներում: Տեսակարար կշիռը մասի բաժինն է ամբողջի մեջ, որը

չի կարող ավել լինել 100-ից: Սա պետք է կազմել ավելի հետևողական և ճշգրտել: Երկրորդ առաջադարկությունս վերաբերում է հետևյալին, որ մենք օրենսդրությամբ, հաշվապահական հաշվառման մասին օրենքի 24-րդ հոդվածի, ներքին աուդիտի մասին օրենքի տրամաբանությամբ, յուրաքանչյուր ֆինանսական հաշվետվություն հաստատելիս՝ անհրաժեշտ է, որպեսզի ներկայացվեն հաշվեքննության արդյունքներ: Ձևավորվել է մի տարօրինակ կարգ, որը տրամաբանական չէ, երբ հաստատվում, գնահատվում է հաշվետվությունը, հետո նոր միայն իրականացվում է հաշվեքննություն: Այսպիսի պարագաներում տրամաբանական կլիներ, խորհրդում կամ նախնական քննարկման արդյունքներով, ոչ թե հաստատել և գնահատել, այլ հավանություն տալ կատարվածին և գնահատմանը անդրադառնալ այն ժամանակ, երբ ակնհայտ կլինեն աուդիտի արդյունքները: Մենք պետք է այս հանգամանքին կարևորություն տանք, մանավանդ որ անցած տարիներին բուհերում ֆինանսական վերահսկողություն իրականացնող հատուկ մարմինը երբ իրականացնում էր ստուգումներ, կոնֆլիկտ առաջացավ, թե արդյոք նրանք կարող են ստուգել պետական միջոցներից բացի այլ միջոցների ծախսումները: Այստեղ իսկապես խնդիր կա: Եթե հաշվեքննությունը պետականորեն չի իրականացվում այդ մարմինների կողմից, գոնե ներքին աուդիտի օրենքի համապատասխան, ցանկացած հաշվետվություն պետք է ներկայացվի հաշվեքննության արդյունքների հետ միասին: Իմ առաջարկը հետևյալն է, որը վերաբերվում է այլ բուհերին և կազմակերպություններին, եթե հաշվետվությունը ներկայացվում է նախապես՝ առանց հաշվեքննության, ապա ընդունել ի գիտություն և հաստատել ու գնահատել, երբ առկա կլինեն հաշվեքննության արդյունքները:

**Ց. Ակոսյան** – Ես առաջարկում և խնդրում եմ ուսանողական գործուղումների հոդվածի ծախսերը ավելացնել, քանի-որ 2011թ.-ը ցույց տվեց, որ տարվա կեսին տրամադրված 2 միլիոն դրամը սպառվում է:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Եթե խոսքը գնում է 2 միլիոն ավելացման մասին, ապա ես առաջարկում եմ, որ այդ գումարը ուսանողական գործուղումների համար տրամադրի համալսարանի շրջանավարտների միավորումը, որը հնարավորություն կտա այդքան գումարի իրականացնել գործուղումներ: Եթե այլ առաջարկություններ չկան, ապա առաջարկում եմ հաստատել առաջարկված նախագծերը համապատասխան առաջարկությունների հաշվառմամբ: Այն է.

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի 2011 թվականի եկամուտների և ծախսերի վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
2. Երևանի պետական համալսարանի 2011 թվականի եկամուտների և ծախսերի հաշվետվության գնահատումը կատարել հաշվեքննության արդյունքների հիման վրա:

**Կողմ՝ 64, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Առաջարկում եմ քվեարկել որոշման մյուս նախագծի հաստատման համար.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի 2012 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը (բյուջե)՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Երևանի պետական համալսարանի ռեկտորին 2012 թվականի ծախսերը կատարել Երևանի պետական համալսարանի 2012 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:

**Կողմ՝ 64, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Օրակարգի չորրորդ հարցը ընթացիկ հարցերն են: Ո՞ւնեք առաջարկություններ կամ հարցեր:

**Վ. Դումանյան** – պարոն Նախագահ, Դուք ձեր խոսքի մեջ նշեցիք, որ մենք տարվա ընթացքում առնվազն երկու անգամ հանդիպում ենք: Ես կցանկանայի, որ դա դառնա իրականություն, քանի որ խորհրդի նիստեր տարին մեկ անգամ է անցկացվում և լավ կլիներ համալսարանի խորհրդի նիստերը գումարել երկու անգամ՝ մեկը ուսումնական, մյուսը՝ ֆինանսական տարվա ավարտին: Ինչպես նաև կցանկանայի խնդրել, որ համալսարանին հատուկ կարգավիճակ տալու որոշումը ի կատար ածվեր, քանի-որ համալսարանի բեռը իսկապես մեծ է Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում: Պետք է, որ մենք չբավարարվենք միայն «Մայր Բուռ» անվանումով և պետք է, որ մեր աշխատավարձն էլ չզիջի մյուս բուհերի աշխատավարձերին:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Ես հաճույքով պատրաստ եմ հանդիպել ցանկացած ֆորմատով՝ և խորհրդի նիստի գումարմամբ, և ուսանողների հետ հանդիպումներով: Մյուս հարցի կապակցությամբ կարծում եմ, որ մենք հիմա կհանձնարարենք պարոն Աշոտյանին, որպեսզի մեր հաջորդ հանդիպման ժամանակ նա մեզ պատոնապես ներկայացնի, թե ինչքան է համալսարանում միջին աշխատավարձը, թե համալսարանում դոցենտը, դոկտորը ինչքան են միջինում ստանում և մնացած բուհերն էլ համեմատական կարգով: Ինչպես նաև, անկախ ամեն ինչից, Երևանի պետական հա-

մալսարանը հատուկ կարգավիճակ ունի և դա դրսևորվում է տարբեր ձևերով: Եթե մենք պետական բյուջեին զուգահեռ համալսարանում ինչ-որ ծրագիր ենք իրականացնում, ապա դա արդեն իսկ վերաբերմունք է, իսկ այդպիսի ծրագրերը մի քանիսն են: Պետք է մյուսներին հատուկ մեր դեմ տրամադրել, կարևորը գործ անելն է: Չի կարող համալսարանում դասախոսը ավելի ցածր վաստակել, քան մյուս բուհերում, եթե դա այդպես է, ապա դա անպայման կուղղվի: Իրականությանը պետք է ավելի սթափ նայել, որպեսզի արդյունավետ որոշումներ կայացնել, իսկ ում բեռը ավելի շատ է, նա այնքան ավելի հաստատուն է քայլում: Տեսություն:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Դ. Հայրապետյան

17.01.2012թ.